

1748

3K 23

U-73

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹԻՒՆ „ԵՐՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՕՆԱԼ“ № 6.

30 MAY 2005

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ—ՄԻԱՑԵՔ

03 NOV 2000

333
L-35

Ն. ԼԵՆԻՆԻ.

3K23

Մ-73

պ.

Մ Ի Ջ Ի Ն

ԳԻՒՂԱՑԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թ Ի Յ Լ Ի Ս

1919

11 SEP 2013

Ռուսաստանի Կոմունիստական կուսակցության 8-ր համագումարում 18—23 մարտի 1919 թ. տրամ զեկուցումը:

1008
36017

ՄԻՋԻՆ ԳԻՒՂԱՑԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

— Ընկերներ, ես պէտք է ներողութիւն խնդրեմ, որ չաջող-
ւեց ինձ ներկայ լինել այն սէկցիայի բոլոր նիստերին, որ ըն-
արեց համագումարը գիւղում գործելու հարցի ուսումնասիրու-
թեան համար. ուստի ասածներէս լրացումը կլինեն այն ընկեր-
ներէ ճառերը, որոնք սէկցիայի աշխատանքներին մասնակցել են
սկզբից: Սէկցիան վերջի վերջոյ մշակեց թէզիսներ, որոնք յանձնու-
եւ ին մասնաժողովին, որ ապա զեկուցանւեն ձեռք: Ես կուզե-
նայի կանգ առնել հարցի ընդհանուր նշանակութեան վրայ, ապա,
թէ ինչպիսի կերպարանք ստացաւ նոյն սէկցիայի աշխատանք-
ներէ հետեանքում և թէ այժմ իմ տեսակէտից ինչպէս է կան-
գնում այն մեր կուսակցութեան առջև իր ամբողջութեամբ:

Ընկերներ, միանգամայն բնական է, որ պրօլէտարական
յեղափոխութեան զարգացման ընթացքում մենք ստիպւած լինենք
առաջին տեղը յատկացնել հասարակական կեանքի մերթ այս,
մերթ այն առաւելապէս բարդ և կարևոր խնդիրներին: Միանգա-
մայն բնական է, որ մի յեղաշրջման ժամանակ, որը շօշափում
է և չէ՛ կարող չշօշափել կեանքի ամենախորը հիմունքները,
ժողովրդական ամենալայն զանգւածները, — ոչ մի կուսակցու-
թիւն, մասսաներին փոքրիշատէ մօտիկ կանգնած ոչ մի կառավա-
րութիւն բացարձակօրէն հնար չունի ընդգրկելու միանգամից
կեանքի բոլոր կողմերը:

Եւ եթէ այժմ մենք հարկադրւած ենք կանգ առնելու գիւ-
ղում կատարող աշխատանքի հարցի վրայ և առանձնացնելու
այդ հարցից գլխաւորապէս գիւղացիական միջին տարրի վիճակը,
ապա պրօլէտարական յեղափոխութեան զարգացման ընդհանուր
տեսակէտից ոչինչ տարօրինակ և անբնական չըկայ այստեղ:
Հասկանալի է, որ պրօլէտարական յեղափոխութիւնը հարկադր-
ւած եղաւ սկսել երկու իրար հակառակ դասակարգերի հիմնական
փոխադարձ յարաբերութիւնից՝ պրօլէտարիատի և բուրժուազիայի:

Հիմնական նպատակն էր՝ իշխանութիւնը բանւոր դասակարգին յանձնել, ապահովելով նրա զիկտատութեան, աստալելով բուրժուազիային և խելով նրա իշխանութեան անտեսական այն աղբիւրները, որոնք անպայման խանգարիչ են հանդիսանում սօցիալիստական ամեն մի շինարար աշխատանքի համար: Մենք բոլորս, որչափով որ ծանօթ ենք մարքսիզմին, երբեք չենք կասկածել այն ճշմարտութեան մէջ, որ կապիտալիստական հասարակութեան շրջանակում վճռական նշանակութիւն կարող է ունենալ հասարակութեան անտեսական կառուցածքի տեսակէտից՝ կամ պրօլետարիատը, կամ բուրժուազիան: Այժմ մենք շատ ենք պատահում նախկին մարքսիստների, օրինակ՝ մէնշևիկների բանակից, որոնք պնդում են, թէ բուրժուազիայի դէմ պրօլետարիատի մղած վճռական պայքարի շրջանում տիրապիտող կարող է լինել դէմօկրատիան ընդհանրապէս: Այդպէս են ասում մէնշևիկները, ամբողջովին միացած էս-էրներին: Կարծես թէ բուրժուազիան ինքը չէ, որ ստեղծում է կամ առոչինչ դարձնում դէմօկրատիային, նայած թէ որն է աւելի ձեռնտու նրան:

Իսկ, եթէ դա այդպէս է, ապա չէ կարող ոչ մի խօսք լինել դէմօկրատիայի մասին ընդհանրապէս՝ բուրժուազիայի և պրօլետարիատի միջև եղած սուր պայքարի միջոցին: Մնում է սակայն դարձանալ, թէ ինչպէս այդ մարքսիստները կամ իբր թէ մարքսիստները, — օրինակ, մեր մէնշևիկները, այդքան արագ մերկացնում են իրանք իրանց, ինչպէս շուտ երևան է գալիս նրանց իսկական էութիւնը, իբրև մանր-բուրժուական դէմօկրատներ:

Մարքսը իր ամբողջ կեանքում պայքարել է մանր-բուրժուական դէմօկրատիայի և բուրժուական դէմօկրատիզմի պատրանքի դէմ: Մարքսը ամենից աւելի ծաղրել է սովից մեռնող բանւորների ազատութիւնը, կամ հաւասարութիւնը մի մարդու, որ վաճառում է իր բանւորական ոյժը բուրժուային, որը իր հերթին որպէս թէ առնում է նրա աշխատանքը ազատ շուկայում հաւասար և ազատ կերպով: Իր բոլոր անտեսագիտական աշխատութիւնների մէջ Մարքսի մեկնաբանել է այդ երևոյթը: Կարելի է ասել, որ Մարքսը ամբողջ «Կապիտալը» գրած է մեկնելու համար այն ճշմարտութիւնը, թէ կապիտալիստական հասարակութեան հիմնական ոյժը հանդիսանում են և կարող են հանդի-

սանալ բացառապէս բուրժուազիան և պրօլետարիատը. բուրժուազիան որպէս կապիտալիստական այդ հասարակութեան կառուցանողը, որպէս նրա ղեկավարը, իսկ պրօլետարիատը՝ նրա գերեզմանափորը, այն միակ ոյժը, որ կարող է փոխարինել նրան: Հազիւ թէ գտնւի Մարքսի աշխատութիւնների մէջ մի գլուխ, որ նւիրւած չլինի վերոյիշեալ խնդրին: Կարելի է պնդել, որ ամբողջ աշխարհի սօցիալիստները անթիւ անգամ երգւել են բանւորների առաջ, թէ նրանք ըմբռնել են այդ ճշմարտութիւնը:

Սակայն, երբ բանը հասաւ բուրժուազիայի և պրօլետարիատի միջև յանուն իշխանութեան ծագած ներկայ վճռական պայքարին, այն ժամանակ մենք տեսանք, թէ ինչպէս մեր մէնշևիկներն ու էս-էրները, նոյն պէս և ամբողջ աշխարհի հին սօցիալիստական կուսակցութիւնների պարագլուխները մոռացան այդ ճշմարտութիւնը և սկսեցին մեքենայօրէն կրկնել Ֆիլիստէրի ֆրազները դէմօկրատիզմի մասին:

Երբեմն մեղանում նոյնիսկ փորձում են այդ բառերին յատկացնել աւելի մեծ նշանակութիւն, կրկնելով «դէմօկրատիայի զիկտատութեան» դարձածքը: Դա հարկաւ կատարեալ անհեթեթութիւն է: Մենք պատմութիւնից շատ լաւ գիտենք, որ բուրժուական դէմօկրատիայի զիկտատութեան հասկացում է ոչ այլ կերպ, քան եթէ ապստամբ բանւորների ճնշումն: Այդպէս եղաւ 1848 թւից սկսած, թէպէտ առանձին օրինակներ կարող ենք գտնել դրանից առաջ ևս: Պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, որ հենց բուրժուական դէմօկրատիայի տիրապետութեան օրին աւելի ևս լայն ու ազատ կերպով զարգանում է պրօլետարիատի և բուրժուազիայի միջև մղող սուր պայքարը: Մենք համոզւեցինք այդ ճշմարտութեան մէջ գործնական կեանքում: Եւ եթէ Խորհրդային Կառավարութեան քայլերը 1917 թւի հոկտեմբերից սկսած աչքի էին ընկնում իրանց հաստատ բնաւորութեամբ բոլոր հիմնական հարցերի նկատմամբ, ապա պատճառն այն է եղել, որ այդ ճշմարտութիւնից մենք երբեք չենք նահանջել, երբեք այն չենք մոռացել: Թիայն մի դասակարգի-պրօլետարիատի-զիկտատութեան կարող է վճռել գերիշխանութեան հարցը բուրժուազիայի դէմ պայքար մղելով: Բուրժուազիային կարող է յաղթել մի-միայն պրօլետարիատի զիկտատութեան: Տապալել բուրժուազիա-

յին կարող է բացառապէս պրօլէտարիատը: Մասաները յետէ-
ւից բուրժուազիայի դէմ ընդունակ է տանելու միմեայն պրօլէ-
տարիատը:

Հարկաւ, սրանից չէ հետևում այն, որ կօմունիզմի յետա-
գայ շինարարութեան մէջ, երբ բուրժուազիան, արդէն տապալ-
ւած է և քաղաքական իշխանութիւնը պրօլէտարիատի ձեռքին
է, — որպէս թէ յետագայում ևս մենք կարող կլինենք կառավար-
ւել առանց միջդասակարգային այլ տարրերի մասնակցութեան:

Բնական էր այն, որ պրօլէտարիատի յեղափոխութեան
սկզբին գործիչների ամբողջ ուղադրութիւնը ուղղւած էր մի
գլխաւոր, հիմնական խնդրի վրայ. նախ պրօլէտարիատի գերիշ-
խանութեան վրայ և ապա որ բուրժուազիան անկարող լինի
կրկին վերագաւազուել իր իշխանութեանը: Մենք շատ լաւ գի-
տենք, որ մինչև այժմ էլ բուրժուազիայի ձեռքին են այն առան-
ձնաշնորհումները, որոնք կապւած են այլ երկրներում եղած հար-
ստութիւնների կամ հէնց մեզ մօտ գտնւող ղրամական հարս-
տութեան հետ: Մենք շատ լաւ գիտենք, որ բուրժուազիան չէ
հրաժարւել կրկին իր իշխանութիւնը ձեռքերից, չէ դա-
դարում փորձեր անելուց վերականգնելու իր տիրապետութիւնը:

Սակայն դա դեռ բոլորը չէ: Բուրժուազիան, որ միշտ առաջ
է մղել «որտեղ լաւ, այնտեղ էլ հայրենիք» սկզբունքը, որ ֆինան-
սի տեսակէտից միշտ էլ միջազգային է եղել, այդ բուրժուազիան
համաշխարհային մասշտաբով տակաւին մեզանից զօրեղ է: Նրա
տիրապետութիւնը արագօրէն խախտւում է, նա տեսնում է այն-
պիսի օրինակներ, որպիսին է Հոնդուրասի յեղափոխութիւնը, —
որի մասին մենք բաղդ ունեցանք յայտնելու ձեզ երէկ և որի
մասին հաստատող նոր տեղեկութիւններ հասան այսօր. ասում
ենք, այդ բուրժուազիան արդէն սկսում է ըմբռնել, որ իր տի-
րապետութիւնը երերում է, որ նա զրկւում է գործողութեան
ազատութիւնից: Այնուամենայնիւ այժմ, եթէ հաշւի առնենք
նիւթական միջոցները համաշխարհային մասշտաբով, չենք կա-
րող չընդունել, որ բուրժուազիան նիւթապէս մեզանից տակաւին
շատ ուժեղ է:

Ահա ինչու մեր ուղադրութեան, մեր գործնական քայլերի
ինքն տասնորդականը նւիրւած է եղել և պիտի լինի այդ հիմնա-

կան խնդրին՝ բուրժուազիայի տապալմանը, պրօլէտարիատի իշ-
խանութեան ամրապնդման, ապա բուրժուազիայի իշխանութիւնը
վերականգնելու բոլոր հնարաւորութիւնների ոչնչացմանը: Դա
միանգամայն ընական է, օրինական, անխուսափելի, և այդ աշ-
խատանքի մեծ մասը արդէն կատարւած է աջողութեամբ:

Այժմ մենք պէտք է հերթի գնենք հասարակական այլ շեր-
տերի խնդիրը: Մենք պիտի — և դա մեր ագրարային սէկցիայի
ընդհանուր եղբայրացութիւնն է եղել, որին, համոզւած ենք, կը-
միանան մեր կուսակցական բոլոր գործիչները, որովհետև մենք
նրանց դիտողութիւնների ու փորձերի եղբայրակումն ենք արել,
— հերթական խնդիր դարձնենք միջին գիւղացիութեան հարցը իր
ամբողջ բովանդակութեամբ:

Անշուշտ կը գտնւեն այնպիսի մարդիկ, որոնք փոխանակ
մտածելու մեր յեղափոխութեան ընթացքի մասին, փոխանակ խոր-
հելու թէ ինչ նպատակներ կան գրւած մեր առաջ ներկայումս,
— կօգտագործեն Պորհրդային իշխանութեան իւրաքանչիւր քայ-
լը ծաղրելու և քննադատելու համար, ինչպէս այդ նկատելի է պա-
րոնայք մէնշէլիկների ու աջ էս-էրների շրջանում: Դրանք այն
ժարդկանցից են, որոնք մինչև այժմ էլ չեն հասկացել թէ պէտք
է վերջապէս ընտրութիւն անեն մեր և բուրժուազիայի դիկտա-
տուրայի միջև: Նրանց վերաբերմամբ մենք հանդէս բերինք բա-
ւականաչափ համբերողութիւն և նոյնիսկ բարեհոգութիւն, մենք
հնարաւորութիւն կտանք մի անգամ ևս զգալու մեր բարեհո-
գութիւնը, սակայն մօտիկ ապագայում այդ համբերողութեանը
ու բարեհոգութեանը վերջ կտանք, և եթէ նրանք ընտրութիւն
չանեն, այն ժամանակ ամենալուրջ կերպով կառաջարկենք նրանց
գնալ Կօլչակի մօտ (ծափահարութիւն):

Մենք նման մարդկանցից չենք սպասում մտաւոր առանձին
փայլուն ընդունակութիւն (ծիծաղ):

Սակայն կարելի էր սպասել, որ նրանք, զգալով իրանց
վրայ Կօլչակի դադանութիւնները, կըմբռնեն մեր իրաւունքը՝
պահանջել նրանցից ընտրութիւն անել մեր և Կօլչակի միջև, եթէ
հոկտեմբերից յետոյ առաջին ամիսներում բազմաթիւ միամիտ
մարդիկ յիմարութիւն ունեցան կարծելու, թէ պրօլէտարիատի
դիկտատուրան մի անցողական, պատահական բան է, բայց այժմ

ժամանակ է, որ մէնչեկներն ու էս-էրները հասկանան, որ գոյութիւն ունի մի ինչոր օրինաչափութիւն այն պայքարի մէջ, որ պիտի տեղի է ունենում ամբողջ միջազգային բուրժուազիայի գործի ոյժով:

Գործնականօրէն հրապարակի վրայ են երկու հակադիր ոյժեր. բուրժուազիան և պրօլետարիատի դիկտատուրան: Ով այդ բանը չէ կարգացել Մարքսի և բոլոր մեծ սօցիալիստների աշխատութիւնների մէջ, նա երբէք սօցիալիստ չէ եղել, սօցիալիզմից ոչինչ չէ հասկանում, բաւականացրել է միայն իրան սօցիալիստ անւանելով: Այդ մարդկանց մենք տալիս ենք կարծ ժամանակ մտածելու և պահանջում ենք, որ նրանք լուծեն այդ ինդիքը: Ես յիշեցի նրանց այն պատճառով, որ նրանք չեն լուծու, այլ, պիտի ասեն, բոլշեիկները դրել են մանր գիւղացիութեան հարցը, ուզում են «հաճոյաբանութիւններ անել նրանց հետ»: Ես շատ լաւ գիտեմ, որ այդ կարգի առարկութիւնները և դրանցից աւելի վատթարագոնն էլ լայն ընդունելութիւն ունի մէնչեկեկեան մամուլի մէջ: Մենք դէն ենք շարունակ այն, երբէք նշանակութիւն չըտալով մեր հակառակորդների այդ դատարկարանութեանը: Մարդիկ, որոնք ընդունակ են ճօճելու բուրժուազիայի և պրօլետարիատի միջև, կարող են ասել այն, ինչ ցանկանում են: Մենք գնում ենք մեր ճանապարհով:

Մեր ճանապարհը որոշում է նախ և առաջ դասակարգային ոյժերի ընդհանուր գումարով: Կապիտալիստական հասարակութեան մէջ զարգանում է բուրժուազիայի և պրօլետարիատի պայքարը: Քանի դեռ չէ վերջացել այդ պայքարը, մեր լուրջ ուշադրութիւնը կենդրոնացած պիտի լինի նրան իր վախճանին հասցնելու վրայ: Նա իր վախճանին տակաւին չէ հասած: Այդ պայքարում յաջողեց մեզ շատ բան անել: Միջազգային բուրժուազիան այլևս չէ կարող գործել ազատ ձեռքերով: Իրա լաւագոյն ապացոյցը Հունգարական յեղափոխութիւնն է: Ըստ որում պարզ պիտի լինի, որ մեր շինարար աշխատանքը գիւղում գուրս է եկել իր շրջանակից. մինչ այժմ ամեն ինչ ենթարկւած է եղել յանուն իշխանութեան մղած պայքարի հիմնական պահանջներին:

Այդ շինարարութիւնը անցել է երկու գլխաւոր ֆազերով:

1917 թւի հոկտեմբերին մենք իշխանութիւնը վերցրինք ամբողջ գիւղացիութեան հետ միասին: Դա բուրժուական յեղափոխութիւն էր այն չափով, որ չափով դասակարգային պայքարի երևոյթը գիւղում գեռ չէր արտայայտուել: Ինչպէս տեսցի, միմիայն 1918 թւի ամառը սկսեց պրօլետարիատի իսկական յեղափոխութիւն նաև գիւղում: Եթէ մենք չկարողանայինք բարձրացնել այդ յեղափոխութիւնը, մեր աշխատանքը կլինէր աղարկել: Առաջին էտապն այն էր, որ բոլոր սօցիալիստների համար էլ հիմնական է և առանց դրան սօցիալիստը սօցիալիստ չէ. այսինքն գիւղական պրօլետար և կիսապրօլետար առարկերի առանձնացումը գիւղում և նրանց միացումը քաղաքի պրօլետարիատին՝ գիւղական բուրժուազիայի դէմ պայքարելու համար:

Այդ էտապի հիմնական մասը աւարտւած է: Այն կազմակերպութիւնները, որոնք մեր ձեռքով սկզբում ստեղծւեցին այդ նպատակի համար, այն է ընչազգային կոմիտէները, այնքան են արմատացել, որ մենք հնարաւոր համարեցինք փոխարինել նրանց կանոնաւոր ընտրւած Խորհուրդներով. այսինքն վերակազմել գիւղական Խորհուրդներն այնպէս, որ նրանք դառնան դասակարգային գերիշխանութեան, պրօլետարիատի իշխանութեան օրդաններ գիւղում: Մեր ձեռնարկած այնպիսի քայլերը, ինչպէս օրինակ սօցիալիստական հողային շինարարութեան և սօցիալիստական երկրագործութեանը անցնելու ժամանակաւոր օրէնքը, — որը ընդունւել է մտ անցնելում կենդրոնական գործադիր կոմիտէում և հարկաւ ձեռ ամենքիդ յայտնի է, — տալիս են աղբւրձ օրերի ընդհանուր գումարը մեր պրօլետարիատի յեղափոխութեան տեսակէտից:

Իլլաւորը, որ պրօլետարական յեղափոխութեան առաջին և հիմնական նպատակն է հանդիսանում՝ մենք արել ենք: Եւ որովհետեւ մենք այդ արել ենք, ուստի այժմ հերթական է դարձել մի աւելի բարդ նպատակ. պարզել մեր վերաբերմանը դէպի միջին գիւղացիութիւնը: Ով կարծում է, թէ այդ նպատակի առաջ մղումը մի տեսակ թուլացումն է կլինի մեր իշխանութեան, թուլացում պրօլետարիատի դիկտատուրայի առաջ կրեբի որոշ փոփոխութիւն, թէկուզ մասնակի, թէկուզ ամենաթոյլ փոփոխութիւն մեր հիմնական քաղաքականութեան մէջ, ապա նա բոլորովին

հասկացողութիւն չունի պրօլետարիատի նպատակներին, կոմուն-
նիստական յեղաշրջման էութեան մասին: Եւ համոզւած եմ, որ
նման մարդիկ չկան մեր կուսակցութեան մէջ:

Եւ միայն կամենում էի նախազգուշացնել ընկերներին այն
մարդկանցից, որոնք բանւորական կուսակցութիւնից դուրս լի-
նելով կարող են այնպէս խօսել ոչ այն պատճառով, որ դա
բխում է նրանց որեւէ աշխարհահայեացքից, այլ ուղղակի մեր գործը
խանգարելու և սպիտակ գւարդիականներին օգնած լինելու հա-
մար, այլ խօսքով՝ միջին գեղջուկին մեր դէմ լարելու համար,
որը միշտ տատանւող է եղել, չէ կարող չտատանւել և տա-
կաւին երկար ժամանակ պիտի տատանւի: Նրան մեզ դէմ լարելու
համար նման մարդիկ պիտի ասեն. «տեսէ՛ք, նրանք հաճոյաբանում
են ձեզ հետ: Ուրեմն հաշի առան ձեր ապստամբութիւնները և
իրանք տատանւեցին» կային, կային: Մեզ հարկաւոր է, որ մեր
բոլոր ընկերները զինւած լինեն նման ագիտացիայի դէմ: Եւ ես
համոզւած եմ, որ նրանք կզինւեն, եթէ մենք այժմեկից լու-
ծենք այդ հարցը դասակարգային պայքարի տեսակէտից:

Միանգամայն պարզ է, որ այդ հիմնական հարցը հանդիսա-
նում է աւելի բարդ և անյետաձգելի. ինչպէս որոշել պրօլետա-
րիատի վերաբերմունքը դէպի միջին գիւղացիութիւնը:

Ընկերներ, այդ հարցը մարքսիստների համար չէ յարուցա-
նում որեւէ դժուարութիւն տեսական իմաստով, որը արդէն ըմբո-
նել է բանւորների խոշոր մեծամասնութիւնը: Եւ կյիշեցնեմ
Կառւարդութեան հոգային հարցին նուիրւած մի գրքի մասին, — որ գրւած
է այն ժամանակ, երբ Կառւարդութեան տակաւին ուղիղ էր մեկնաբա-
նում Մարքսի ուսմունքը և անվիճելի հեղինակութիւն էր համար-
ւում այդ հարցում, — ահա հոգային հարցին նւիրած այդ գրքում
կապիտալիզմից սօցիալիզմին անցնելու մասին նա հետեւեալն է
ասում. «սօցիալիստական կուսակցութեան նպատակը պէտք է լինի
գիւղացիութեան չեղճացումը, այսինքն՝ գիւղացիութիւնը պէտք
է չեղճ մնայ պրօլետարիատի և բուրժուազիայի միջև մղւած
պայքարում, որպէսզի գիւղացին ներգործական օգնութիւն չը-
հասցնի բուրժուազիային մեր դէմ»:

Բուրժուազիայի տիրապետութեան երկարատև ժամանակա-
շրջանում գիւղացիութիւնը աջակից է եղել բուրժուազիային,

կողմնակից է եղել նրա իշխանութեանը: Եւ դա հասկանալի է,
եթէ ինկատի ունենք բուրժուազիայի անտեսական ոյժն ու տի-
րապետութեան քաղաքական միջոցները: Մենք չենք կարող
յուսւալ, որ միջին գիւղացիութիւնը միանգամից մեզ կողմնա-
կից դառնայ: Բայց, եթէ մենք կանոնաւոր տանենք մեր քաղա-
քականութիւնը, այն դէպքում որոշ ժամանակից յետոյ կըղադա-
րեն տատանումները և գիւղացին կանցնի մեր կողմը:

Դեռ էնգէլսը, որը Մարքսի հետ միասին դրեց գիտական
սօցիալիզմի հիմքը, այսինքն այն ուսմունքը, որով մշտապէս դե-
կավարւում է մեր կուսակցութիւնը և մասնաւանդ յեղափոխութեան
օրերին, — դեռ էնգէլսը բաժանել է գիւղացիներին մանր, միջին
և խոշոր խաւերի: Այդ բաժանումը և քաղաքական երկրների մեծա-
մասնութեան համար մինչև այժմ էլ համապատասխան է իրական
պայմաններին: Էնգէլսն ասում էր. «գուցէ նոյն իսկ խոշոր գիւ-
ղացիութեանը անհրաժեշտ չլինի բռնութեամբ ճնշել ամեն
տեղ»: Ուրեմն բռնութիւն գործել միջին գիւղացիութեան դէմ
մեր կողմից (մանր գիւղացիութիւնը՝ մեր բարեկամն է)՝ նման
մտայնութիւն չէ ունեցել և ոչ մի խելացի սօցիալիստ:

Այդպէս էր ասում էնգէլսը 1894 թւին, իր մահից մի տա-
րի առաջ, երբ հոգային խնդիրը դարձաւ հերթական: Այս տեսա-
կէտը մեզ ցուցադրում է մի ճշմարտութիւն, որը թէպէտ երբեմն
մոռանում են, բայց որի նկատմամբ մենք բոլորս տեսականօրէն
համաձայն ենք: Կաւածածտէրերի և կապիտալիստների նկատ-
մամբ մեր նպատակն է՝ լիակատար էքսպրօպրիացիան: Սակայն
միջին գիւղացիութեան վերաբերմամբ մենք անհնարին ենք հա-
մարում թոյլատրել որևէ բռնութիւն: Նոյնիսկ հարուստ գիւղա-
ցիութեան մասին մենք չենք կարող խօսել այնպիսի վճռակա-
նութեամբ, որպիսին թոյլ ենք տալիս բուրժուազիայի վերա-
բերմամբ, այն է՝ բացարձակ էքսպրօպրիացիա հարուստ գիւղա-
ցիութեան և կուլակների նկատմամբ: Մեր ծրագրում դրանց
տարբերութիւնը ընդգծւած է:

Մենք ասում ենք. ճնշել հարուստ գիւղացիութեան դիմա-
դրութիւնը, ճնշել նրա հակաշեղափոխական փորձերը: Եւ սակայն
դա լիակատար էքսպրօպրիացիա չէ:

Հիմնական տարբերութիւնը, որով որոշւում է մեր վերաբեր-

մունքը դէպի բուրժուազիան և դէպի միջին գիւղացիութիւնը, հետեւեալն է. լիակատար էքսպրօպրիացիա բուրժուազիայի, դաշնակցութեան ուրիշին չշահագործող միջին գիւղացիութեան հետ: Այս հիմնական դիժը տեսականօրէն բոլորի կողմից էլ ընդունուած է: Սակայն գործնական կեանքում այդ դիժը չէ պահպանուած հետեւողական կերպով. տեղերում դեռ չեն սովորել պահպանել այն:

Երբ պրօլետարիատը, տապալելով բուրժուազիային և ամբապնդելով իր իշխանութիւնը, ձեռք դարկեց նոր հասարակական շէնքի կառուցման գործին, միջին գիւղացիութեան հարցը ստացաւ առաջնակարգ արժէք: Աշխարհի և ոչ մի սօցիալիստ չէ ժխտել այն միտքը, թէ կօմունիզմի ստեղծումը կնխանայ դաշնական ուղիներով խոշոր և մանր երկրագործական երկրներում: Դա ամենատարրական, այբբենական ճշմարտութիւն է: Այդ ճշմարտութիւնից բխում է այն, որ քանի մենք աւելի և աւելի ենք մօտենում կօմունիստական շինարարութեան նպատակներին, մեր կենդրօնական ուշադրութիւնը բեռնուած է ուղղակի միջին գիւղացիութեան վրայ:

Շատ բան կախած է նրանից, թէ ինչպէս ենք մենք որոշում մեր վերաբերմունքը դէպի միջին գիւղացիութիւնը: Տեսականօրէն այդ խնդիրը լուծած է, բայց մենք արդէն փորձել ենք, և մեր գործնականով դիտենք, թէ ինչ տարբերութիւն կայ հարցի տեսական լուծման և նրա գործնական մարմնացման մէջ կեանքում: Մենք մօտեցանք ուղղակի այն տարբերութեանը, որը այնքան բնորոշ էր Ֆրանսիական մեծ յեղափոխութեանը, երբ Ֆրանսիական Կօնկէնտը—Ազգային ժողովը, հանդէս եկաւ խոշոր ձեռնարկութիւնների ամենալայն թափով, սակայն իրականացնելու համար չունեցաւ անհրաժեշտ նեցուկ, չիմացաւ նոյն իսկ, թէ որ դասակարգի վրայ պիտի յենւել այս կամ այն որոշումը իրագործելու համար:

Մենք գտնուում ենք անհամեմատ աւելի բաղդաւոր պայմաններում: Ենթադրեալ ամբողջ մի տարի դարդացման մենք գիտենք, թէ որ դասակարգի վրայ պիտի յենւենք: Գիտենք նոյնպէս, որ գործնական փորձառութիւն այդ դասակարգը բաւարար չափով տակաւին չունի: Բանւոր դասակարգի և բանւորական կուսակցութեան համար հարցի հիմնականը պարզ է, այն է՝ տապալել

բուրժուազիային և իշխանութիւնը յանձնել բանւորներին: Բայց ինչպէս անել: Բոլորը յիշում են թէ ինչպիսի դժուարութիւններով, ինչպիսի սխալանքներով էինք անցնում արգարագատութեան վրայ հիմնւած բանւորական կօնտրօլից, վերահսկողութիւնից՝ դէպի նոյն արդիւնաբերութեան բանւորական կառավարումը: Բայց չէ որ դա մեր դասակարգի ներքին աշխատանքն էր միայն, պրօլետարական ներքին միջավայրի, որի հետ մենք միշտ էլ գործ ենք ունեցել: Իսկ այժմ հարկադրւած ենք ցոյց տալու մեր վերաբերմունքը դէպի մի նոր դասակարգ, որին քաղաքի բանւորը չէ ճանաչում:

Անհրաժեշտ է որոշել մեր վերաբերմունքը դէպի մի դասակարգ, որը որոշ կայուն վիճակի մէջ չէ մնում: Պրօլետարիատը մասսայօրէն սօցիալիզմի կողմակից է, բուրժուազիան մասսայօրէն սօցիալիզմի հակառակ է. մշակել վերաբերմունք այն երկու դասակարգերի միջև դիւրին է: Բայց, երբ մենք դիմում ենք այնպիսի մի խաւի, որպիսին է միջին գիւղացիութիւնը, այստեղ պարզուած է, որ այս դասակարգը տատանւող է:

Նա մասամբ սեփականատէր է, մասամբ աշխատաւոր: Նա չէ շահագործում ուրիշ աշխատաւորների ներկայացուցիչներին: Նա հարկադրւած է եղել տասնեակ տարիներով պաշտպանել իր դրութիւնը, փորձել է իր կաշւի վրայ կալածատէրերի և կապիտալիստների շահագործումը, տանջւել է շատ և միեւնոյն ժամանակ՝ սեփականատէր է:

Այժմ մեր վերաբերմունքը դէպի այդ տատանւող դասակարգը յարուցանում է մեծամեծ դժուարութիւններ: Հիմնւելով մեր մի տարուց աւելի անցած փորձառութեան, մեր աւելի քան կիսամիայ պրօլետարական աշխատանքի վրայ դիւղում, հիմնւելով նաև այնտեղ կատարւած դասակարգային շերտաւորման վրայ, մենք պէտք է ըստ ամենայնի խուսափենք փութկոտութիւնից, տեսականապէս չմշակւած կամ մշակման շրջանում գործը աւարտւած համարելուց: Այն բանաձևի մէջ, որ առաջարկում է ձեռք սեկիցիայից ընտրւած յանձնաժողովը և որը կը կարգայ այստեղ յետագայ ճառախօսներից մէկը, դուք կը գտնէք բաւականաչափ նախադրույցութեան վերոյիշեալ իմաստով:

Տնտեսական տեսակէտից պարզ է, որ մենք օգնութեան

պէտք է հասնենք միջին գիւղացիութեանը: Դրանում տեսակա-
նօրէն և ոչ մի կասկած չըկայ: Սակայն մեր բարքերի, մեր կու-
տուրական մակերեւոյթի շնորհիւ, շնորհիւ տէխնիկական և կուլ-
տուրական ոյժերի բացակայութեան, որոնցով մենք կարող լի-
նէինք օգնութեան գալ գիւղին, այլ և շնորհիւ մեր անօգնակա-
նութեան, որով մօտենում են նրան,—մեր ընկերները
աւելի շատ հարկադրանքի միջոցով են գործում գիւղում, որով և
վնասում են ամբողջ գործին:

Դեռ երէկ մեր ընկերներին մէկը մի գրքոյկ տւեց ինձ.
Հրահանգ կուսակցական աշխատանքի համար Նիժեգորոյիան
նահանգում» խորագրով, որ հրատարակել է Նիժեգոր. Ռ. Կ. Կ
(մեծամասն.) Կօմիտէն,—որի մէջ կարդում եմ, օրինակ, 41 որդ
երեսի վրայ հետեւալը. «արտակարգ հարկերի դէկրէտը պիտի
իւր ամբողջ ծանրութեամբ ընկնի գիւղական կուլակների, սպէ-
կուլիանտների և առհասարակ գիւղացիական միջին տարրի վրայ»: Իրաւամբ կարելի է ասել, որ մարդիկ «հասկացել են»: Կնւմ վրի-
պակ է սա, որ անհանդուրժելի է, անթոյլատրելի: Կնւմ փութ
կոտ, հապճեպ կատարւած գործ, որ ապացուցել կարող է մի
բան, թէ որքան վտանգաւոր է նման գործում փութկոտութիւնը:
Կնւմ վերջապէս (և սա ամենավատ ենթադրութիւնն է, որ ես չեմ
կամենում անել Նիժեգորոյեան ընկերների վերաբերութեամբ)
արդիւնք է պարզ անըմբռնութեան: Կարող է պատահել նաև, որ
դա արդիւնք լինի վրիպման:

Գործնականում տեղի են ունենում այսպիսի դէպքեր, ինչ-
պէս պատմեց մեր ընկերներին մէկը յանձնաժողովում. նրան շրջա-
պատել են գիւղացիք և իւրաքանչիւրը հարցրել. «Որոշի՞ դու,
միջին գիւղացի՞ եմ ես, թէ՞ ոչ: Ունեմ երկու ձի և մի կով: Ու-
նեմ երկու կով և մի ձի» և այլն: Անշուշտ գաւառներում պտտող
այդ ագիտատօրը պէտք է ունենայ մի անսխալ ցուցաչափ, որով
կարողանայ որոշել՝ գիւղացին միջին խաւից է, թէ՞ ոչ: Դրա հա-
մար հարկաւոր է իմանալ այդ գիւղացու տնտեսութեան ամբողջ
պատմութիւնը, նրա յարաբերութիւնը ցածր և բարձր խաւերի
հետ, ճշմարիտ իմանալ այդ տմենը մենք հարկաւ չենք կարող...

Այդտեղ հարկաւոր է ունենալ գործնական մեծ պատրաս-
տութիւն, տեղական պայմանների ծանօթութիւն: Այդ ծանօթու-

թիւնը սակայն մենք դեռ չունենք: Սոստովանել դա խելի էլ ա-
մօթ չէ. պիտի պարզ խոստովանենք: Մենք երբեք ուսույթստներ
չենք եղել և չենք երևակայել, որ կօմունիստական հասարակու-
թիւն պիտի ստեղծենք կոկ ու մաքուր կօմունիստների սպիտակ
ձեռներով, որոնք պիտի ծնւած ու դաստիարակւած լինէին զուտ
կօմունիստական հասարակութեան մէջ: Դրանք մանկական հե-
քէաթներ են:

Կօմունիզմի շինարարութիւնը մենք պիտի գլուխ բերենք
կապիտալիզմի բեկորներից, և այդ գործը կարող է անել այն
դասակարգը, որ եփւել է կապիտալիզմի դէմ մղւած պայքարի
մէջ: Պրօլետարիատը,—դա շատ լաւ յայտնի է ձեզ,—գերծ չէ
կապիտալիստական հասարակութեան պակասաւոր գծերից ու
թուլութիւններից: Նա պայքարում է սօցիալիզմի համար, միև-
նոյն ժամանակ պայքարում է և սեփական պակասութիւնների
դէմ: Պրօլետարիատի առաջաւոր և լաւագոյն մասը, որ քաղա-
քում տասնեակ տարիներով ծանր պայքար է մղել, հարկադրւած
պիտի լինէր այդ պայքարում իւրացնել քաղաքի և մայրաքաղա-
քի կեանքի ամբողջ կուլտուրան, և յայտնի չափով նա իւրացրել
է այն: Դուք դիտէք, որ գիւղը մատնւած է եղել տգիտութեան
նոյն իսկ ամենաառաջաւոր երկրներում: Հարկաւ, մենք գիւղի
կուլտուրական մակարդակը պիտի բարձրացնենք, սակայն դա
երկար տարիների գործ է: Ահա ինչն են մոռանում մեր ընկեր-
ները ամենուրեք, և դա աւելի պատկերաւոր է դարձնում մեզ
համար տեղերում աշխատողների իւրաքանչիւր ասած խօսքը. ա-
սում եմ ոչ այստեղի ինտելիգէնտների խօսքը, ոչ պաշտօնատե-
ղերում գործողների,—նրանց մենք շատ ենք լսել—այլ գիւղում
կատարւող աշխատանքը գործնականօրէն դիտողների: Այդ
մարդկանց խօսքը մեզ համար աւելի գնահատելի է եղել հողային
սէկցիայի նիստերին: Նրանց խօսքը առաւել ևս գնահատելի պի-
տի լինի այժմ,—ես համոզւած եմ դրանում,—ներկայ կուսակ-
ցական համագումարին, մանաւանդ այդ խօսքը վերցրւած է ոչ թէ
գրքերից և դէկրէտներից, այլ կեանքից:

Այս ամենը մեզ գրդում է աշխատանքը տանել այն ուղղու-
թեամբ, որ մենք պարզութիւն մտցնենք մեր վերաբերմունքի
մէջ դէպի միջին գիւղացիութիւնը: Դա շատ դժւար է, որովհետև

կեանքում չը կայ այդ պարզութիւնը: Այդ խնդիրը ոչ միայն չէ լուծել, այլ և անլուծելի է: Եթէ կամենում են այն լուծել մի-
անգամից, հէնց այժմ: Կան ասողներ. «կարիք չըկար այգքան
դէկրէտներ գրել», կշտամբում են խորհրդային Կառավարութեանը,
որ նա գրում էր դէկրէտներ, առանց իմանալու՝ ինչպէս մար-
մաացնել նրանց կեանքի մէջ: Այդ մարդիկ իրապէս չեն նկատում,
թէ ինչպէս իրանք գլորում են դէպի սպիտակ գաղափարա-
ները: Եթէ մենք հարկւրաւոր դէկրէտներ գրելով պիտի յուսա-
յինք փոխել գիւղական ամբողջ կեանքը, կատարեալ ապուշներ
կըլինէինք:

Սակայն եթէ հրաժարենք դէկրէտներում այդ ճանապարհը
գծելուց, մենք դառնա՞նք կլինէինք սօցիալիզմին: Այդ դէկրէտ-
ները, որոնք հարկաւ չէին կարող գործնականօրէն այդքան շատ
և լիակատար չափով մարմնանալ կեանքում, պրօպագանդի տե-
սակէտից խաղացին խոշոր դեր: Եթէ առաջ պրօպագանդա էինք
մղում ընդհանուր ճշմարտութիւնների օգնութեամբ, այժմ պրօ-
պագանդա ենք մղում աշխատանքով: Դա ևս քարոզ է, սակայն
քարոզ գործողութեամբ, հարկաւ ոչ անփորձ տղայամիտների ա-
ռանձին գործողութիւնների իմաստով, որպիսի երեւոյթի վրայ
մենք շատ ենք ծիծաղել տնարխիստների գործունէութեան և
հին սօցիալիզմի շրջանում:

Մեր դէկրէտը կոչ է, բայց ոչ հին ոգով ինչպէս օրինակ
Վրանուորներ, ելէք, տապալեցէք բուրժուազիային: Ոչ, մեր դէկ-
րէտը կոչ է մասսաներին, կոչ՝ գործնական աշխատանքի: Դէկրէ-
տները, դրանք մի մի հրահանգ են, մասսաներին գործնական աշ-
խատանքի հրաւիրող: Ահա որն է կարեւորը թող այդ դէկրէտնե-
րում գետեղւածից շատ բան համարւի անպէտք, կեանքում ա-
նիրադրօնելի: Բայց նրանց մէջ գործնական աշխատանքի համար
կայ նիւթ, ըստ որում դէկրէտի նպատակը կայանում է նրա-
նում, որ գործնական քայլերի սովորեցնի հարկւրաւոր, հազարա-
ւոր, միլիօնաւոր մարդկանց, որոնք ունկնդրում են խորհրդային
Իշխանութեան ձայնին:

Դա գործնական քայլի փորձն է սօցիալիստական շինարա-
րութեան՝ գիւղական կեանքի սահմաններում: Եթէ այսպէս մօտե-
նանք, մեր օրէնքների, դէկրէտների և որոշումների գումարից

բաւականաչափ շատ բան դուրս կը բերենք: Նրանց վրայ մենք
չենք նայի որպէս բացարձակ անմիջապէս իրադրօնելի որոշում-
ների:

Պիտի խուսափել այն ամենից, ինչը կարող է խրախուսող
լինել առաջին գեղծութիւնների գործնական կեանքում: Մեր շարքերն
են մտել հատ ու կէտ կարիէրիստներ, արկածախնդիր մար-
դիկ, իրանց կօմոնիստ անւանող, որոնք խաբում են մեզ և
տեղ են գտել մեզ մօտ այն պատճառով, որ իշխանութեան գլուխ
այժմ կանգնել են կօմոնիստները, որովհետեւ ազնիւ «պաշտօ-
նեայ» տարրերը չկամեցան գալ մեզ հետ աշխատելու շնորհիւ
իրանց յետամնաց գաղափարների, իսկ կարիէրիստները զուրկ են
ամեն գաղափարից, դուրկ նաեւ ազնուութիւնից: Այդ վերջինները
ձգտում են աչքի ընկնել և տեղերում գործ են դնում բռնութիւն,
ենթադրելով որ լաւ բան են անում: Ուստի և գործնականում
այդ երեւոյթը յանգում է այնտեղ, որ գիւղացիները ասում են.
«Գեցցէ խորհրդային Իշխանութիւնը, բայց կորչի կօմոնիստն»,
(այսինքն կօմոնիզմը): Այդ գէպերը մտացածին չեն, այլ
կեանքից վերցրած փաստեր, տեղերում եղած ընկերների հաղոր-
դածը: Չպիտի մոռանանք, որ ամեն մի չափազանցութիւն, գլխա-
պատառութիւն և փութկոտութիւն հսկայական վնաս է հասցնում
գործին:

Մեզ հարկ եղաւ անչափ շտապել, գործել մի յուսահատ ու-
տիւն դուրս գալու համար իմպէրիալիստական պատերազմից,
որը մեզ հասցրեց անկման. հարկ եղաւ գործադրել ամենաժայրա-
հեղ լարւածութիւն՝ ջախջախելու բուրժուազիային և նրա հետ
միասին այն ոյժերը, որոնք սպառնում էին ջախջախել մեզ: Այդ
ամենը անհրաժեշտ էր. առանց դրան մենք անկարող էինք յաղ-
թել: Եւ եթէ նոյն ձևով փորձենք գործել միջին գիւղացիութեան
նկատմամբ, դա կլինի ապուշութիւն, այնպիսի բթամտութիւն և
գործի կործանում, որ գլխակցօրէն նման ձևով գործել կարող է
միմիայն պրօփօպատօրը:

Այդ խնդիրը պիտի տարւի միանգամայն այլ կերպ:
Այստեղ խօսքը վերաբերում է ոչ թէ յայտնի շահագործողների
դիմադրութիւնը խորտակելուն, նրանց յաղթելուն և տապալելուն,
որպիսի խնդիր տրւում էր առաջինում: Ոչ, քանի մենք այդ
գլխաւոր խնդիրը լուծել ենք, հերթական են դարձել այժմ աւե-

1008
36017

ի բարդ խնդիրներ: Եւ այս պարագայում բռնութեամբ այլ ևս ոչինչ ստեղծել չենք կարող: Բռնութիւնը միջին գիւղացիութեան վրայ՝ դա մի չափազանց խոշոր սխալ է: Այդ խաւը ամենաբազմաթիւն է, բազմամիլիոնը: Նոյն իսկ Եւրոպայում, ուր նա ոչ մի տեղ այնպիսի մեծ ոյժ չէ ներկայացնում, որտեղ հսկայական զարգացման են հասել տէխնիկան և կուլտուրան, քաղաքի կեանքը, երկաթուղին, որտեղ ամենից աւելի կարելի էր մտածել այդ մասին, — ասում եմ, ոչ մէկը ամենայնպէս չի տեսնում սօցիալիստներին անգամ չէ առաջարկել ձեռք առնել բռնի միջոցներ միջին գիւղացիութեան նկատմամբ:

Երբ վերցրինք իշխանութիւնը, մենք յենում էինք ամբողջ գիւղացիութեան վրայ: Այն ժամանակ բոլոր գիւղացիները մի նպատակ ունէին՝ կուր կալուածատէրերի դէմ: Սակայն մինչև այժմ էլ նրանք մնում են նախապաշարած խոշոր տնտեսութեան դէմ: Գիւղացին մտածում է, «եթէ մնում է խոշոր տնտեսութիւնը, ուրեմն ես մնում եմ բատրակ» *) Դա անշուշտ սխալ համոզմունք է: Սակայն խոշոր տնտեսութեան նկատմամբ գիւղացու ունեցած այդ պատկերացման հետ կապւած է ատկութիւնը, վերոյիշումը այն մասին, թէ ինչպէս են կալուածատէրերը ճնշել ժողովրդին: Այդ գզացմունքը դեռ մնում է, նա չէ մեռել:

Ամենից աւելի մենք պիտի հիմնենք այն ճշմարտութեան վրայ, որ բռնութեան մէթօգնելով ոչ մի դրական վախճանի չենք հասնի: Տնտեսական խնդիրը այլ կերպ է դրած այստեղ: Այստեղ չըկայ այն կատարը, որ կարելի լինի կարել, թողնելով նրա հիմքը, ամբողջ շէնքը: Այն կատարը, որ ներկայացնում էին կապիտալիստները քաղաքում, այստեղ գոյութիւն չունի: Գործել այստեղ բնութեամբ՝ նշանակում է գործը ամբողջովին կործանել: Այստեղ անհրաժեշտ է երկարատե դաստիարակչական աշխատանք: Թէ մեզանում և թէ ամբողջ աշխարհում գիւղացին գործնական մարդ է և բէալիստ. պիտի գիւղացուն իրական, շօշափելի օրինակով ապացուցանել, որ ամենալաւը «կոմունիստն» է: Հարկաւ ոչինչ չի դուրս գալ, եթէ գիւղում երևան գան դիւտավառ մարդիկ, որոնք թոչում գալիս են քաղաքից, գալիս, փոքր ինչ ինտէլիգենտական զրոյցաներ անում, ապա թքոտելով հեռա-

*) Գիւղական ընչազուրկ մշակ.

նում: Այդպէս է լինում: Ուստի և յարգանքի փոխարէն նրանք արդարացի կերպով ծաղր են առաջ բերում:

Այդ հարցի նկատմամբ մեր խօսքն այն է, որ կոմունիստն մենք խրախուսում ենք, բայց դա պիտի դուրս գայն ձեռով, որ կարելի լինի շահել գիւղացու հաւատը: Իսկ մինչև այդ մենք գիւղացու աշակերտները պիտի լինենք և ոչ նրա ուսուցիչները: Չկայ աւելի տխմար բան, քան գիւղական տնտեսութիւնից և նրա առանձնայատկութիւններից ոչինչ չիմացող մարդիկ, — որոնք վազում են գիւղ միմիայն լսած լինելով հասարակական տնտեսութեան օգտակարութեան մասին և քաղաքի կեանքից յոգնած ուզում են աշխատել գիւղում, — այդ մարդիկ իրանց համարում են գիւղացիների ուսուցիչներ: Չկայ առաւել տխմար բան, քան միջին գիւղացիների վրայ՝ նրա տնտեսական յարաբերութիւնների շրջանում՝ բռնութիւն դրած դնելու միտքը:

Հարցն այստեղ չէ դրւում միջին գիւղացուն էքսպրօպրիացիայի ենթարկելու մասին, այլ գիւղացու կեանքի պայմանների առանձնայատկութիւնները հաշուի առնելու, գիւղացիներից դատ վերցնելու, թէ ինչ ձևով կարելի է անցնել լաւագոյն կարգերին, և երբէք չըհամարձակւել հրամայելու: Ահա այն կանոնը, որ մենք մշակել ու դրել ենք մեր առջև (ծափահարութիւն ամբողջ համագումարի):

Ահա այն կանոնը, որ մենք աշխատեցինք զետեղել մեր նախագծած բանաձևի մէջ, քանի որ այդ տեսակէտից, ընկերներ, մենք քիչ սխալներ չենք արել: Խոստովանել այն երբէք ամօթ չէ: Մենք փորձառութիւն չունէինք: Շահագործողների դէմ ձգած պայքարը վերցրել ենք փորձից: Եթէ մեզ մեղադրեն դրա համար, մենք կասենք. «պարոնայք կապիտալիստներ, դուք էք դրանում մեղաւոր: Եթէ դուք ցոյց չտայիք այդ աստիճան վայրագ, անիմաստ, ստոր և կատաղի դիմադրութիւն, եթէ դուք զաշն չկնքէիք ամբողջ աշխարհի բուրժուազիայի հետ, յեղաշրջումը կնգունէր աւելի խաղաղ ձևեր»:

Այժմ վաճառելով ամեն կողմից յարուցած կատաղի գրոհը, մենք կարող ենք դիմել այլ ձևերի, որովհետեւ մենք գործում ենք ոչ իբրեւ մի խմբակ, այլ որպէս միլիօնաւոր մասսաներ իր յետեից տանող կուսակցութիւն: Միլիօնաւոր բազմութիւնը չէ կա-

բող միանգամից ըմբռնել կատարած փոփոխութիւնը, ուստի և գրեթէ բոլոր հարւածները՝ ուղղւած կուլակների դէմ՝ իջել են միջին գիւղացու վրայ: Եւ դա զարմանալի էլ չէ: Միայն պիտի հասկանալ, որ դա առաջանում է պատմական պայմանների շնորհիւ և ոչ նոր պայմաններն ու նոր նպատակները վերոյիշելալ դասակարգի վերաբերմամբ նոր էլ հոգեբանութիւն պիտի պահանջեն:

Մեր գէկրէտները գիւղացիական տնտեսութեան վերաբերեալ իրանց հիմնական մասում ճիշտ են: Դրանցից և ոչ մէկից հրաժարելու, ոչ մէկի նկատմամբ զղջալու հիմք չունենք: Սաւակայն գէկրէտներին ընդունելի լինելը չէ նշանակում, թէ կարելի է նրանց հարկադրանքով կապել գիւղացու վրին: Ոչ մի գէկրէտում այդ մասին խօսք չըկայ: Նրանք ճիշտ են որպէս նախագծւած ուղիներ, որպէս կոչ դէպի գործնական աշխատանք: Երբ մենք շեշտում ենք՝ «խրախուսեցէք միութիւնները», գրանով տալիս ենք ցուցմունքներ, որոնք պիտի բաղմաթիւ փորձերի ենթարկեն, մինչև որ կարելի լինի գտնել նրանց մարմնացման վերջնական ձևը: Երբ միանգամ ասւած է, որ համաձայնութեան պիտի գալ գիւղացիների հետ նրանց ազատ կամքով, նշանակում է գիւղացուն պիտի համոզել և համոզել գործնականապէս: Պօսքերով նրանք չեն համոզւել և շատ էլ լաւ կանեն, որ չեն համոզւել: Շատ վատ կ'լինէր, եթէ նրանք հազոգւէին միմիայն գէկրէտների ընթերցումով ու ագիտացիօն թերթիկներով: Եթէ այդ ձևով կարելի լինէր վերափոխել տնտեսական կեանքը, նման փոփոխութիւնը անգամ պղնձէ գրօշի արժէք չէր ունենայ: Նախ հարկաւոր է ապացուցանել, որ նման միութիւնը անհամեմատ լաւ է. միացնել մարդկանց այնպէս, որ նրանք իրապէս միացած լինեն և ոչ կազմալուծւած. ապացուցել, որ դա աւելի ձեռնտու է: Այդ ձևով է դնում խնդիրը գիւղացին, այդպէս են դնում խնդիրը նաև մեր գէկրէտները: Եթէ մինչև այժմ մենք չը կարողացանք հասնել մեր նպատակին, դրանում ամօթալի ոչինչ չըկայ: պիտի բացարձակ խոստովանենք:

Մենք լուծել ենք մի խնդիր, որ ամեն մի սօցիալիստական յիշադրման համար հիմնական է. բուրժուազիային տապալելու խնդիրը: Այդ խնդիրը իր հիմնական մասում լուծւած է մեր կողմից, թէպէտ և այժմ սկսւում է մի չափազանց ծանր կիսամեակ, երբ ամբողջ աշխարհի իմպէրիալի-

տները ճգնւած են մեզ խորտակելու: Կարող ենք պնդել առանց չափազանցութեան, որ իմպէրիալիստները ըմբռնել են արդէն իրանց ձեռնարկութեան կատարեալ անյուսալիութիւնը առաջիկայ կիսամեակից յետոյ: Կամ նրանք կօզուեն այժմ մեր ուժաւորութիւնից և յաղթանակ կտանեն որևէ երկրի վրայ կամ մենք կ'լինենք յաղթող ոչ միայն մեր երկրի վերաբերութեամբ, այլ ամբողջ աշխարհի: Ներկայ կիսամեակին, երբ պարենորման և փոխադրական միջոցների ճգնաժամը հասել է ծայր աստիճանի, իսկ իմպէրիալիստական պետութիւնները փորձում են արշաւել մի քանի ճակատներով, մեր վիճակը դառնում է չափազանց ծանր, թէև սա վերջին ծանր կիսամեակն է:

Անհրաժեշտ է առաջւայ պէս լարել մեր բոլոր ոյժերը արշաւելու համար մեզ վրայ արշաւող արաաքին թշնամու դէմ: Երբ խօսում ենք գիւղական աշխատանքի նպատակների մասին, մենք պիտի մեր ամբողջ փորձառութիւնը ուղղենք շահագործողների անպայման ճնշելու կողմը, չնայած բազմաթիւ դժւարութիւններին: Չպիտի մոռանանք, որ գիւղում միջին գիւղացիութեան նկատմամբ մեր նպատակները միանգամայն այլ են:

Բոլոր գիտակից բանւորները Պետերբուրգի, իվանովօ—Վօզնսէնսկի, Մօսկւայի, որոնք եղել են գիւղերում, պատմում են միշտ թիւրիմացութիւնների, ընդհարումների մասին, առաջին հայեացքից կարծես անհնարին է և խոշոր, և սակայն այդ բոլորը հարթել կամ թուլացել են նրանով, որ հանդէս եկողները եղել են բանիմաց բանւորներ, որոնք խօսելիս են եղել գիւղացու հետ ոչ գրգռի, այլ գեղջուկի համար հասկանալի լեզուով. խօսել են ոչ թերև հրամանատարներ, այլ իբրև բացատրող ընկերներ,—թէև նրանք ծանօթ չեն գիւղական կեանքին,—գիմելով աշխատաւորի զգացմունքին ընդդէմ շահագործողների: Ընկերական նման բացատրութեան շնորհիւ անւում էր այն, ինչ չէին կարողանում անել ուրիշ հարիւրաւոր մարդիկ, որոնք իրանց պահում էին որպէս հրամանատարներ և կառավարիչներ:

Ահա որպիսի ոգով է համոզւած այն ամբողջ բանաձևը, որ առաջարկում ենք այժմ ձեր ուշադրութեան:

Ես աշխատեցի իմ համառօտ գեկուցումով կանգ առնել ներկայ բանաձևի սկզբունքային և քաղաքական ընդհանուր կողմերի:

վրայ: Փորձեցի ապացուցանել, — թոււմ է, թէ ինձ յաջողեցապա-
ցուցել: որ ամբողջ յեղափոխութեան շահերի տեսակէտից մենք չենք
փոխել մեր ոչ մի գիծը, չենք արել և ոչ մի թեքում: Սպիտակ
գաւազնիակներն ու նրանց օգնականները գոռում են կամ պի-
տի գոռան այդ մասին: Թող գոռան: Դա մեզ չի յուզում:

Ամենահետադան կերպով մենք զարգացնում ենք մեր
ձգտումները: Անհրաժեշտ է բուրժուազիային տապալելուց յետոյ
այժմ մեր ուշադրութիւնը ուղղել միջին գիւղացիութեան կեանքի
շինարարութեան կողմը: Նրա հետ մենք պիտի հաշտ ապրենք:
Միջին գիւղացիութիւնը կօմոնիստական հասարակութեան մէջ
մեր կողմը կլինի այն ժամանակ, երբ մենք կթեթեացնենք և
կբարեկաւենք նրա կեանքի տնտեսական պայմանները: Եթէ վաղը
մենք կարող լինէինք տալ նրան հարկւր հազար հատ տրակտոր-
ներ, մատակարարել նրանց բէնզին, գտնել մեքենավարներ
(դուք գիտէք, որ դա առայժմ ֆանտազիա է), այն ժամանակ
միջին գիւղացին կասէր՝ «ես կօմոնիստի կողմն եմ», այսինքն
կօմոնիստի: Բայց դրա համար նախ հարկաւոր է յաղթել մի-
ջազգային բուրժուազիային: ստիպել նրան տալ մեզ այդ տրակ-
տորները կամ մեր արտադրութիւնը հասցնել այն զրութեան, որ
ինքներս կարողանանք պատրաստել այն: Միայն այս ձևով հա-
ջը դրած կլինի ուղիղ մակարդակի վրայ:

Գիւղացին կարիք ունի քաղաքի արդիւնաբերութեան. ա-
ռանց դրան նա ապրել չի կարող, իսկ արդիւնաբերութիւնը մեր
ձեռքին է: Եթէ գործին ձեռնարկենք կանոնաւոր կերպով, գիւ-
ղացին մեզանից շնորհակալ կլինի, որ քաղաքից տանում են նրա
համար մթերքներ, գործիքներ և կուլտուրա: Տանողները կլինեն
ոչ թէ կալւածատէրերն ու շահագործողները, այլ իրանց նման
ընկեր—աշխատաւորները, որոնց նա բարձր է գնահատում: Բայց
գնահատում է գործնականապէս, գնահատում միայն իրական
օգնութիւնը, միանգամայն արդարացի կերպով մերժելով հրա-
մանագրութիւնը, «կարգադրութիւնը» վերևից:

Նախ օգնեցէք, ապա փնտրեցէք հաւատարմութիւն: Եթէ
կանոնաւոր տարւի գործը, կանոնաւոր լինի մեր գաւառական
խմբակների իւրաքանչիւր քայլը ամեն մի գաւառում, ամեն մի
վոլոստում պարենաւորման մասերում, վերջապէս ամեն մի կազ-

մակերպութեան մէջ. եթէ ամեն մի քայլը ուշադիր կերպով վերաս-
տուգման ենթարկւի մեր յիշած տեսակէտից, մենք կընւաճենք
գիւղացու հաւատը, որից յետոյ միայն կարող կլինենք քայլել
գէպի առաջ: Այժմ մենք պիտի օգնութեան հասնենք նրան, խոր-
հուրդներ տանք: Դա կառավարչի հրաման չի լինի, այլ ընկերա-
կան խորհուրդ: Այն ժամանակ գիւղացին ամբողջովին մեր կող-
մը կլինի:

Ահա, ընկերներ, ինչ է պարունակում իր մէջ մեր բանաձեւը.
ահա որը պիտի լինի, ինձ թոււմ է, համագումարի քննութեան
առարկան: Եթէ ընդունենք բանաձեւը, եթէ դա է որոշելու մեր
կուսակցական կազմակերպութիւնների ամբողջ աշխատանքը, այն
ժամանակ մենք գլուխ կը բերենք մեր առաջ դրած երկրորդ
մեծ նպատակն ևս:

Ինչպէս տապալել բուրժուազիային, ինչպէս ճնշել նրան
այդ արդէն սովորեցինք և պարծենում ենք նրանով: Ինչպէս կա-
նոնաւորենք մեր յարաբերութիւնները միջին միլիոնաւոր գիւղա-
ցիութեան հետ, ինչպէս նւաճել ենք նրա հաւատը,—այդ բանը
տակաւին չենք սովորել: Դա պիտի պարզ ասենք. սակայն հաս-
կացել ենք նրա իմաստը, դրել ենք մեր առաջ այդ նպատակը և
լի յոյսերով, մեր ամբողջ գիտութեան ոյժով, կատարեալ վճռա-
կանութեամբ ասում ենք մենք մեզ. այդ հարցն էլ կլուծենք, և
այն ժամանակ սօցիալիզմը կդառնայ բացարձակապէս այնպա-
թելի (երկարատեւ ծափահարութիւն):

ԳԻՆՆ Է ԵՐԿՈՒ ՐՈՒԲԼԻ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0178402

